



### 181. ՏՂԱՆ ՀՈՐԸ ԾՆԱԽԶՈՒՄ ՉԻ

Մին մարթ ա ինոնմ, մին էլ մին կնեգլ։ Տրանց մինակ մին մարտ տղա յա ինոնմ։ Տղան վըեր մըծանում ա, պարտկ ըն անում, փսակում։ Հայա պարտկը տալու, էտ կնդանը մարթը մըեռնում ա, Պարտկ ըն անում, թաղում։ Տրանա ետը կնեգլն ա մեռնում։ Տղան պարտկ ա անում, մորն էլ թաղում։ Պարտկերը կյամ ըն հիրուր յիրա կյտառվինմ, պըրտկըտարերն էլ տրան շատ ըն նըղըցնում։ Տղան գյուղինմ շի հինչ անե։ Մին օր էլ տխուր տանը նստած մտըծելիս, կնեգլը կյամ ա կոշտը, հըրցընում, թե իս՞ լըս տխուր։ Տղան ասում ա.—Պա հինչ ա՞նեմ, շիշկիլվալ ըմ։ Կնեգլն էլ ասում ա.—Մինչև մեհենգլ ես քու կնեզյտ ըմ իլալ, մեհենգյսան տենը ախաղերըտ ըմ, յա տու տանը կաց, ե՞ս քյինիմ ղարիբոթում՝ ըշխադանք անեմ պիրիմ պարտկերը տամ, յա ես կենամ, տու քյինի։ Տղան թե՝ դե էն ա ես կըքյինիմ էլի։ Կնեգլն ասում ա.—Վըեր տեսնաս՝ մին տըեղա փող ա տեհւս կյամ, շնատ-շնատ տըեղըտ փոխես վուշ, կըմընաս, ըշխաղիս։

Տա թաղա հարսը թողում ա տանը, ինքը քյինում ղարիբոթում։ Շատ ա քյինում, թե խրեգլ, հանում ա մին քաղաք։ Մին օր հղըցավը անց կընալիս վըենն ա կենում տես-տեն եշում, մին հարուստ առուտուրական մարթ տրան կանչում ա, տսում։—Բալի ըշխադանք ըս օգում։ Տա թա՝ հա՛ էտ մարթն ասում ա.—Կօզե՞ս

դուքը ններում ա իշխաղիս, սրբիս, թիմիզը նես, ճնշու պիրիս, տանը պինն անես, ծաղկոյնն նիրիս մինչև իրեք տարե. տարեկան թեզ կը տամ քան մանեթ ռոնիկ, իրեք տարան ետը վրեր տրեսնամ ըշկապաց ըս, կը տանեմ դուքյանը, ապրանք տամ, ծախես, ռոնիկտ էլ նհետը կը պիզը ըշը նեմ, կունուր-կունուր քեզ մին մը հծ դժարյան կը տամ, ետնան էլ տրեսնանը:

Տղան տը հզ մեամ ա, ըշխադում: Մին տարան ետը խազայինը տը ենուում ա, վրեր ըշկապաց ա, տանում ա գուքյանը, ռոնիկըն էլ իվիլցնում: Տա կամաց-կամաց փող ա զարկում տոն, ետնան խազայինը տրան ավելի պիցուր ռոնիկավ ըշխադանը ա տամ: Մին քանի տարե վրեր անց ա կենում, տը ենուում ըն, վրեր տղան շատ խը հունը ա, տրանց մին ախճիգյ ա ինում, իրանք էլ մրթը-կը ենեղ մը ծացած, օղում ըն ախճիգյը տրա յիրան փուակեն, տոնը-տեղը յիրան կիրիլ տան, ետնան ըրխըին մը ենենեն: Տղան պինա խարար շի ինում, տրանք էլ գյուղում ըն, վրեր փուակված ա: Մին քանի օրան ետը իրանց շենան իրեք մարթ ըն կյամ տրանց դուքյանը, տղան իրեքին էլ ճնանշում ա, հըրցընում, թե շենումը հինչ կա, հինչ շի կա, հու վա մը եռալ, հու վա սազ: Տրանք ամեն հինչ ասում ըն, համմա էտ տղին ճնանշում ըն: Տա ասում ա, վրեր ինքը էսհինչ մարթին տղան ա, էս ա քան տարե յա, վրեր շենան տոնս ա եկալ: Տրանք էտ տղին իրըսարանք ըն տամ, ասում: —Պա հըմանշում ըմ, վրեր էսքան տարե տոնըտ-տեղըտ թողած, դարիր տը եղ ըս կենում: Տղան շատ ա տխրվում, ետնան քյինում խազայինին կոշտը, ասում: —Հաշիվները, մաքրե, էքյուն քյինում ըմ իմ հայրենիքը: Խազայինն էլ ասում ա: —Էսքան տարե ըստեղ կացալ ըս, ըստեղ սումքերալ, լավ ըշխըդանքու վրա հըսալ, լավ ռոնիկ ըս ըստանում, քյինիլ պիտիս շենումը հինչ անես: Տղան ասում ա: —Զէ, պիտի քյինիմ: Խազայինը թե՝ դե ես ասալ ըմ քեզ ըխնըկանըս նհետ փուակեմ, էսքան ապրանքը նան փողն էլ քեզ թողեմ, դե վրեր քյինում ըս, քյինի, քեզ մին կապեկ էլլա փող ըմ տըլական: Տա թե՝ պա ես էսքան տարե յա ըշխադում ըմ, իմ առըտուրավըս էսքան քու եկամուտտ իվիլացալ ա, ինձ լի՞՛ա էնքան փող լը՝ տըլական, վրեր ճանապարհածախս տը եռա, տանը հետե ել մին խրեգյ տես-տես տանեմ: Կնեղյը մարթին ասում ա: —Դե լավ, բանի իրան հայրենիքը սը երտը օղալ ա, հաշիվնեն մաքրե, թող քյինի: Մարթը թե՝ քյինում ա, թող քյինի, ես իրան կը պոտած պահում ըմ, իսկ փող տալն ու շտալն էլ իմ իրավունքն ա:

Էքյսը տղան պազրաստվում ա, վրեր տը եղատ տոնս կյա:

Թլինիլիս վախտը խազայինն ասում ա.—էսքան, տարե ըշխադալ ըս, քեզ էսքան փող ա հրսնում, օզում ըս փողըտ տամ, թե իրեք խոսկ օնեմ, նա ասեմ: Տղան ասում ա՝ հունց վըեր օզում ըս, ինդի ըրա: Խազայինը թե՛ լավ, էն խոսկերքը վըեր քեզ ասում ըմ, ավելի թանգյ ա, քան բու քսան տարվա ըշխադանքը, խոսկերքն առեմ, փողըտ պահեմ: Տղան թա՛ հինչ անում ըս, ըրա: Խազայինն ասում ա.—Վըերդեղ վըեր մթնե, ընդեղ էլ կըմնաս, քշերը հղե չի թինիս: Մին էլ թե՛ հինչտեղ էլ ինպիս, հիրուշչուն տան գործեն խառնըվես վուչ, ծոնան էլ ասում ա.—Վըերդեղ էլ ինիս, հինչքան էլ կզնըված ինիս, մինան կըմնաս, մինչև հարուրը հմբարես, վըեր կզնըվոցըտ անց չի կինա, նորից մինան կըմնաս, մինչև հարուրը հմբարես, էնքան տի կանես, վըեր կզնըվոցըտ անց կենա: Էտ խոսկերքն ասում ա, իրան քսան տարվան ռոճիկն էլ տամ, թե՛ դե պարի ճանապարհ, հինչտեղ թինիս, խոսկերքըս մոռանաս վեչ: Ախճիգյն էլ կլամ ա, նհետը մին լավ խանչալ պիրում, տամ տղեն, թե էս էլ ինձանան քեզ հիշատակ, վըեր հինչ տեղ էլ ինիս, ինձ մոռանաս վեչ:

Տղան հղե յա ինժամ, քյինում տրեսնում իրանց շինացե էն իրեք մարթն էլ հղե իլած: Հղեննի ցիրեկավ թոռ ա կյամ, մին շնուում մնամ ըն, արեղ օրն անցկըցնում, մինչեվ թոռը կըտրում ա: Տրանա ետը մթնում ա: Իրանց շինացե էն մարթիրւը հղե յըն ինժամ, քյինում, ասում ըն դե սադ օրը ըստեղ կացալ ընթ, հղեն մըերն ա, քյինիլ պիտինքյ, վըեր պրծնե: Տա թա՛ տուք քյինում ըք, քւեցեքյ, ևս կյամ ըոմ, ըստեղ կենալ պիտիմ լուսանան: Նոր քյինիմ:

Տրանք հղե յըն ինժամ, քյինում: Հղեննի մին քամեն, մին բորան ա պիցրանում, ամմեն հինչ տրանց կլիսեն տամ, ըսպանում: Էտ տղան տրեղ կենում ա, ըրավետը հղե ինժամ, քյինում: Վըեր շատ քյինում ա, եշում ա, տրեսնում տրանց մինին մեյիդը մին տրեղ եր ինպատա, քար, հավաղ, փադ, կըլիսեն թափկած, մինն էլ մին օրիշ տեղ եր ինպատա, էն մինն էլ լափ հեռու: Հղեն ա ինպիկիմ, քյինում: Հանում ա մին շեն: Տրեղ մթնում ա: Մին զըրըըդու տոռնը պեց ա անում, եշում, տրեսնում հըլաթումը մին մարթ, տրան ասում ա.—էս ուրուգյուն ինձ դոնազ լը՞ յոր օնել: Տա թե՛ իս լը՞ յոր օնել, դոնազը ըստուծենն ա: Էտ տղան տնատըեռնը նրհետ քյինում ա տոն, տրեսնում տանը մելին, թախտեն յիրան մին փափուկ ոյարա քցած, մին շոն յիրան նըստըըըրած, հըլաթեն էլ եշում ա, տրեսնում կնեղյը ուրըըզեն կոխկան ժինշիլավ կապած: Տա խոսում չի:

Ըստաւը վրեր եր ա կննում, թե քյինի, տնատերը տրան  
շրցընում ա, թե հի՞նչ տըեղ պիտի քյինիս: Տա թե՛ էսհինչ շենը:  
Տնատերն ասում ա.—էսթան տարե յա իմ տոնըս հզբու դրա-  
ղե յա, միշտ զոնաղ ա կյամ ըստեղ, հու վրեր կյամ ա, հըր-  
ցընում ա, թե էս իս՞ յա շոնը թախտեն յիրա նստած, կնեգ-  
լըտ էլ դըրըզին դրազին ժինչիլավ կապած: Տու առաջին  
մարթն ըս, վրեր հըրցըրեր վել: Տա թե՛ հի՞նչ պեն օնեմ,  
վրեր հըրցընեմ, մթեն ըմ ինգյալ, ինձ քոն ինիլի տըեղ ա իլալ  
հարկավլըեր, փափուկ տըեղ ըս շինալ, քոն ըմ իլալ, հաց ըս տվալ,  
կերալ ըմ, մին էլ եր ըմ կացալ, հղես պիտի քյինիմ, հսնեմ իմ  
տոնըս: Էտ տնատերն ասում ա.—Մինչև մեհենգյ հու վրեր եկալ  
ա հըրցըրաւ, կլնիսը կտրալ ըմ, քցալ էն դրազի փոսը, տու վրեր  
հըրցըրալ լըս, օրաս հուը իմ ախազըերս ըս, մեհենգյ նս քեղ նա-  
զըլը կանեմ, թե հունց ա իլալ, վրեր շոնը տարալ ըմ թախտեն յի-  
րա նստըցըրալ, կնեգյըս տարալ շանը տըեղը կապալ. ես էս զու-  
լերումր ամենահարուստ մարթն ըմ, հինչքան էլ էս ինգյուններեն  
ժուղովուրթ կա, ինձ պաշտում ըն, իմ կյանքումըս վրել մին  
մարթու փիսոթուն լըմ ըրալ: Կնդանըս կլնիսը եր շի կալալ, սի-  
րական ա իլալ պըհելիս: Սանոթ մարթիթ իմ անջուկըս ըն քցալ,  
վրեր կնեգյըտ իստի պեն ա անում, ես հըվոտալիս լըմ իլալ: Մին  
օր կնդանըս ըսեցե քյինում ըմ էսհինչ շենը, հնընգյուն կլիլական  
լըմ: Քյինում ըմ էտ շենը, ուրուգյունը ետ տըենուսմ, կյամ, թաքուն  
բըլկունան ակուշկավը եշում, տըենում սուփրան քցած, ըշխար-  
քես տակեն հինչքան լավ պեներ կա, էտ սուփրեն յիրա, կնեգյըս  
էլ քստողին կլիսին մին մարթ նստըցըրած, նհետը խաղ ընելիս:  
Մտե, էտ մարթին զնշան փոնեցե, տրանց նոխտը ինձիրա տա-  
ռեն, ինձ եր քցեցեն, ըսկըսեցեն ինձ խեխտիլը, լիճա խրեգյ ար  
մնացալ, վրեր հնընգյիս տուս կյա, շոնը ժինչիլը պուկում ա, կյամ  
յիրա հսնում, էտ մարթին շքըումաշան փոնում, տա էլ կարում շի  
տուրուր կյալ, ես խանչալըս տուս ըմ օնում, տրա փորը թափում,  
ըսպանում, եր քցենմ: Ետնան էլ կնդանըս ա փըռնում, վեր ըմ կե-  
նում ծընոքերը կըպոտում, շանը ժինչիլը ետ անում տրա պիզը  
քըցում, տանում հըլաթումը շանը տեղան կապում, շոնն էլ պիրում  
թախտեն յիրա խալին քցնում, նստըցընում. մեհենգյ տու կյալ պի-  
տիս ինձ քյինմագյ անես, կնդանըս էլ ըսպանենքյ, տանենքյ իրան  
սիրըկաննեն քշտին տըզվարենքյ, շոնը պիրինքյ իրան տըեղը կա-  
պենքյ, ետնան էլ հղետ ինգյիս, քյինիս: Տա թե՛ լավ: Քյինում ըն  
կնդանըս փոնում, պերանը փալազ կոխում, տանում փոսեն քշտին

կլնիւը կտրում, թշնամ սիրը կանեն կոչտը, շոնը պիրում իրան արեցան կապում:

Էտ տղան վըեր հզե յա ինգյում, թե քիինի, անատերն ասում ա՝ հալած կաց: Տուս ա օնում ամենաթինգյական կտուրեղանան մին բանի թոփ, օրիշ տես-տեսու նհնտ մին տռադրակ վրեսկե յնլ տամ, ասում:—Ղարիբթունա լըս տռն քյինում, տար, հարկավըեր կրկյա:

Էտ տղան վըեր քյինում ա հանում իրանց շենը, արտեն մթնած ա ինում, եշում ա, տըեսնում իրանց տանը քշտին նոր տներ պիցրացած, կարում չի տռնը քթենա: Շատ վըեր տես ու տես եշում ա, իրանց քյինա տռնը աշկալն ա ինգյում, համմա ընդեղ մարթ չի ինում ըպրելիս: Փալաքյանավը պիցրանում ա բալկոնը, տնունը թակում, կնեգյը կյամ ա տռանը քամակը, հրցընում, թե հու վա՞: Տա թա դարիր մարթ ըմ, էս ուրուգյունն ինձ զոնալ եր կալ, կնեգյը թե տանըս մարթ չի կա, էս ա քսան տարի յա հալած էս տանը տնունը պիցրաց չի, կարալ լըմ, քյինի՞ հուր տնուն էլ պից անես, քեզ ետ լըն տալ: Մարթը թե լավ է, շատ ըմ նըղացած, մին էլ քյինիմ վըել օրիշ տըեղ, Վըեր շատ դաշանք ա անում, կնեգյը տնունը պից ա անում, շայ ա տինում, հաց շինում, ողունաղենց հաց տամ, տըեղը քցնամ, վըեր քոն ինի: Տա լիճա նի յա մննում տըեղը, տըեսնում մին ջահիլ տղա յէլ եկավ, նի մտավ իրան կընդանը տըեղը, Խանշալը տռնա ա օնում, վըեր քյինի նոխտեն էլ ըսպանեն, մին էլ խազայինին ասած խոսկը մըետն ա ինգյում, ըսկըսում ա մինան մինչև հարուրը հմբարելը, կընըլոցն անց չի կենում, նորից ա ըսկըսում հմբարելը, էլլա անց չի կենում: Մին քանի հետ վըեր հմբարում ա, մինըր կընըլովոցը հինգարդում ա, տա ետ ա տըեռնում կնգանն ասում:—Տու նոր ըսկըեր, թա քսան տարի յա, վըեր տանտ տնունը պինող չի իլալ, տըեսնում ը՞ս, վըեր կնաներյը լոխ սուտասիգյ ըն, պա էտ ջահիլ տղան հու վա՞, վըեր քզնըհետ ա քոն ինում: Կնեգյը թե՝ տու էս տանը զոնալ ըս, զաշանք ըրեր, ըսկըեր, թող էս ուրուգյունը ըստեղ կենամ, թուղեցե, մեհենգյ էլ ըսկըսալ ըս օրիշ պիներ մտածելը: Վըեր օղում ըս գյիղան, կասեմ:—Քան տարի առաջ իմ մարթըս հրանքեն, հորը-մորը թըղելին պարտկերը թողալ, քյինացալ ա դարիբողում, վըեր փող ըշխագի, դարկե պարտկերը տամ: Քյինալան ետն էս տղան իլալ ա, ես էլ իրան զարկած փողավը համ էս տղան ըմ պահաւ, էսքան մըծըշըրալ, համ պարակերը լոխ տվալ, համ էլ էս թաղա տները շինալ, մեհենգյ աշկես սեր նան սիստակը էս տղան ա, թե հար ա, թե մար ա, թե ախպեր ա, թե տղա յա, յա ախճիգյ,

լոխ էս ա, օրիշ վըել մին պեն շօնեմ, վըեր սրա նհետ չի քոն ինիմ,  
էլ հօնը նհետ քոն ինիմ. մեհենդյ աշկըս հղեցը մարթիս ըմ եշում,  
վըեր կլա, թե կըկլա, շատ լավ, կյալ չի, եռ միշտ նամուսավ  
կացալ ըմ, մինչև կյանքես վերըն էլ կըննական ըմ։ Տա նոր տղեն  
եշում ա, տըեսնում հենց ա լիճա իրան նհետ մեշան կես ըրած  
մին խնձնը ինի։ Տղեն փըթաթվում ա, պըլպըլորում։ Կնեցը նոր  
կլնիս ա ինգյում, վըեր տա իրան մարթն ա։

